

ՄԵՐ ԳԻՒՂԻ ԱՂԲԻՐՆԵՐԸ

ԱՊՐԻԼԵԱՆ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ

Պուտ մը ջո՛ւր...
«Սուրբ Մինաս»ի աղբիւրէն,
Պուտ մը ջո՛ւր...
Ծառաւ շրքներս քրջելու:

Պուտ մը ջո՛ւր...
«Վերարտեր»ի աղբիւրէն,
Պուտ մը ջո՛ւր...
Որ զովանայ իմ հոգին:

Պուտ մը ջո՛ւր...
«Լուսաղբիւր»ի պաղ ջրէն,
Պուտ մը ջո՛ւր...
Որ ներքին կրակն իմ մարէ:

Պուտ մը ջո՛ւր...
«Մանուշակ»ի սուրբ ջրէն,
Պուտ մը ջո՛ւր...
Որ ըսվովի իմ վշտերն:

Պուտ մը ջո՛ւր...
Որ տայ ըստուերն անցեալին,
Պուտ մը ջո՛ւր...
Որ իմ կարօտն ամոհէ:

Պուտ մը ջո՛ւր...
Հայրենիքէն անտէրունչ,
Պուտ մը ջո՛ւր...
Երազներու աշխարհէն:

Պուտ մը ջո՛ւր...
Կաթիլ մը մէր ջրերէն,
Պուտ մը ջո՛ւր...
Այրած սրտիս կարօտի:

ԹԵՐԻ, 24 Ապրիլ, 1965

ՊԵՏՐՈՍ ՍԻՄՈՆԵԱՆ
(Պարտիզակցի)

FONTANE DEL MIO PAESE

Ai martiri armeni

Un sorso d'acqua,
Dalla fonte di «San Minas»...
Un sorso d'acqua,
Alle mie arse labbra...

Un sorso d'acqua,
Dalla fonte di «Verarder»...
Un sorso d'acqua,
Per rinfrescarmi il core...

Un sorso d'acqua,
Dalle fonti di «Lussaggiur»...
Un sorso d'acqua,
Per spegnermi il foco...

Un sorso d'acqua,
Dalle fonti di «Manusciagh»...
Un sorso d'acqua,
Per lenirmi il dolor...

Un sorso d'acqua,
Come l'ombra di quei dì...
Un sorso d'acqua,
Per quietarmi il pensiero...

Un sorso d'acqua,
Dalla Patria solinga...
Un sorso d'acqua,
Da quel mondo di sogni...

Un sorso d'acqua,
Dalle acque nostrane...
Un sorso d'acqua,
All'alma mia èsule!...

Terni, 24 Aprile, 1965

BEDROS SIMONIAN
(di Bardisag)

ՆԱՀԱՏԱԿ ԺՈՂՈՎՈՐԴԻՍ

Յարգա՛նք քեզ իմ վեհ, հերոս ժողովուրդ,
Եղար նահատակ անմեղ, անխորհուրդ.
Ախարեցիք քեզ չոյեր, անապատ,
Սովա՛ծ, ծառաի՛, լուսած, յուսահատ:
Փա՛նք քեզ, յաւերժ փա՛նք
Իմ վեհ ժողովուրդ:

Հեռացա՛ր, քողի՛ր քո շէն օջախներ,
Մենա՛կ քողի՛ր քո անգին շիրիմներ.
Դպրոցներ, վանքեր համբուրեցիր լուս
Եւ «ա՛յ» քաղցիր, զրնացիր տըխուր:
Յարգա՛նք քեզ, իմ վեհ,
Ագի՛ր ժողովուրդ:

Քո շէն պարտէզներ, սիրուն այգիներ,
Գեղեցիկ տըներ առին դահիճներ.
Թողի՛ր վշտահար, զրնացիր դու լո՛ւս,
Քայլեցիր քաղցա՛ծ, ծառա ու տըխուր:
Պատի՛ւ քեզ, իմ վեհ,
Հերո՛ս ժողովուրդ:

Քայլեցիր քալածոս, օրե՛ր, շաբաթներ,
Քայլեցիր անվերջ՝ սարեր ու ձորեր.
Տեսար սուր ու հուր, ցաւե՛ր ու տանջա՛նք,
Որդեկորոյս մօր լաց ու հառաչանք:
Յարգա՛նք քեզ, իմ վեհ,
Անգի՛ն ժողովուրդ:

Անոյ՛ջ մանուկներ, սիրուն աղջիկներ,
Հէ՛յ վա՛յս, խրեցին անգուր դահիճներ.
Խենթացան մայրեր, վշտահար հայրեր,
Յաւից կուրացան տարաբախտ պապեր:
Փա՛նք քեզ, յաւերժ փա՛նք,
Իմ վեհ ժողովուրդ:

Եւ քանի՛-քանի՛ սիրասուն մայրեր,
Արեւ աղջիկներ, անուշիկ հարսներ,
Անվախ՝ եփրատ ու Տիգրիս նետեցին,
Հայի անունը բարձր պահեցին:
Պատի՛ւ քեզ, իմ վեհ,
Հերոս ժողովուրդ:

Ափսո՛ս քե՛զ, հայոց ազիգ ժողովուրդ,
Նահատակ եղար անմեղ, անխորհուրդ.

Յարգա՛նք քե՛զ, իմ վեհ,

Հերո՛ս ժողովուրդ.

Դու մեծ ես, անմեռ,

Դու կ'ապրիս յաւերժ...:

ԱՐԱՄ ԵՐԵՄՅԱՆ

ԱԳՈՍԻՆԵՐԸ

Ինկաւ վերջին արեւն ալ

Լիներուն մէջ արիւնի,

Ինչպէս վերջին գաւակն իր

Ծոցին վըրայ մայրենի.

Երկունք ունի հորիզոնն,

Ու լըռութիւնն ընդարձակ

Անապատէ անապատ

Սփռած մահուան փրկատակ...:

Կարաւաններն հանգչեցան

Դագաղն իրենց կըրելէն...

Մեռելադաշտն՝ բուրաստան

Ծաղիկներով հոգեղէն:

Բայց լեռներէն սեպածեւ

Ինչո՞ւ կ'իջնեն ագռաւներ...

Ա՛յ, եղբայրներս իմ հրաքեւ

Արդէն երկինք ես բռներ:

Դարձէ՛ք, դարձէ՛ք ողբաձայն

Նորէն լեռները հսկայ,

Ո՛վ մարդասէր բռչուններ,

Թաղման կարիք հոս չըկայ:

Հ. ՄԵՍՐՈՊ ՃԱՆԱՇԵԱՆ

ՅՈՅՍԻ ԵՐԳ

Հիմա ժամն է յարութեան,

Եկէ՛ք կրկին ծաղկելու

Ո՛վ հրդեհուած փաղաֆներ մեր անցեալին.

Կեանքի աւիշն ես կու տամ

Յաւերժութեան յոյսերով,

Ա՛յնքան պայծառ՝ արեւուն մէջ ողորուն,

Որ չունենայ վերջալոյս:

Ես հողերէն կը յառնեմ

Անմահներու սուրբ շունչով.

Յիսուն ամ է, մեր յոյսերն ա՛լ ցամփեցան

Օտարներու խորշակով:

Գաղափարն է մեր նոր կեանք,

Եկէ՛ք կրկին համբուրուի մեր աչքերէն,

Արշալոյսի ծարաւով:

Կարի մ'արին եփրատէն

Սափորին մէջ ամփոփուած

Ձեզի մատունք եմ բերեք սա ձեռքերով.

Այգիներուն վըրայ հին

Թող մեր բռներ, որդիներ

Սրսկեն յոյսով մշտագարուն դալարի

Երկնքին տակ օտարին:

Հ. ՄԵՍՐՈՊ ՃԱՆԱՇԵԱՆ